Եղիշե Չարենց

Երկիր Նաիրի

9

Ամենից առաջ հարկավոր է ասել, որ այդ նույն ժամանակ, երբ Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆի բնակարանում հավաքված՝ կատարվող դեպքերի հանդեպ իր բռնելիք դիրքն էր որոշում Տեղական Կոմիտեն- այդ նույն վայրկյանին քաղաքում արդեն կային մարդիկ, որ ո՛չ միայն արդեն որոշել էին իրենց դիրքը, այլեւ փակցրել էին քաղաքի պատերին իրենց այդ դիրքի մասին սոխատառ եւ նաիրատառ հայտարարություններ: Եվ, կարեւորն այն է, որ այդ հայտարարությունների տակ, ի թիվս այլ, մեծ մասամբ քաղաքին անծանոթ, սոխերի ստորագրությանց, կային եւ երկու ստորագրություն, որ բավականին մտահոգություն էին պատճառում ոչ միայն քաղաքի նիսիա բնակիչներին, այլեւ շատ ավելի պատկառելի մարդկանց.- Կարո Դարայանի եւ պ. Մարուքեի (ստույգ՝ Մարուքե Դրաստամատյան) ստորագրություններն էին դրանք, որ մեխի գլուխների նման ցցվելով այդ հայտարարությունների տակից՝ մի շարք պատկառելի նաիրցիների մեջ սկզբից եւեթ այն միտքն էին առաջ բերում, որ այդ մեխի գլուխներին հարկավոր է խփել: Այդ հայտարարություններից բխող այս, որոշ չափով իմպրեսիոնիստական ցանկությունն ավելի եւս խորացավ մի շարք նաիրցիների մեջ մի օր անց, երբ քաղաքում տարածվել սկսեցին «Մութ Տեղ»-ի հետ կապված վերոհիշյալ լուրերը. ասում էին, որ այդ լուրերը տարածում է պ. Մարուքեն. ինչպես ասել ենք արդեն՝ նույնիսկ կարծողներ կային, որ այդ լուրերը տարածելում մատ ունի նաեւ ընկ. Վառոդյանը. երեւակայո՞ւմ եք՝ այն ընկեր Վառոդյանը, որ, ինչպես գիտենք՝ Տեղական Կոմիտեի անդամ էր վաղուց հետե եւ Համո Համբարձումովիչի անձնական բարեկամը: Չգիտենք՝ մատ ունե՞ր, թե՞

չէ այդ լուրերը տարածելում ընկ. Վառոդյանը, բայց փաստը մնում էր փաստ. եւ այդ փաստն այն էր, որ ինքն ընկ. Վառոդյանը գտնվել էր մի ինչ-որ հայտնի ցուցակում, այսինքն՝ ոչ թե հայտնի, այլ գաղտնի, որ հայտնի էր դարձել Կարո Դարայանի, այդ «քամի կուլ տվող» նաիրցու շնորհիվ: Դե արեք ու բան հասկացեք սրանից. եւ այն էլ սա դեռ ամբողջը չէ: Բանն այն է, որ այդ ցուցակը, ինչպես ասում էին՝ լրիվ չէր. չորս թերթ պոկած էր այդ ցուցակից եւ այդ չորս թերթի շուրջն էր ահա, որ Կարո Դարայանն ամեն մի ժողովում բարձրացնում էր անասելի աղմուկ, անտանելի հարայհրոց: Եվ վերջապես ինչքան աղմուկ ուզում էր՝ կարող էր բարձրացնել Կարո Դարայանը, բայց ինչո՞ւ էր կապում նա իր այդ աղմուկը Համո Համբարձումովիչի- Մազութի Համոյի հետ: Պ. Մարուքեին նայած՝ այնպես էր դուրս գալիս, իբր Համո Համբարձումովիչի եւ բժիշկ Սերգե Կասպարիչի ձեռքերի գործն էր այդ հայտնի, այսինքն՝ գաղտնի ցուցակի առաջին չորս թերթերի անհայտ անհետանալը. բայց ո՞վ կհավատա պ. Մարուքեին: Օ, ոչ, մենք չէինք հավատա նման զրպարտության եւ չէինք էլ հավատում, չնայած որ- այդ ես հաստատ գիտեմ- անգամ ընկ. Վառոդյանն այդ առթիվ որոշ շրջաններում արել էր բավականին երկմիտ հայտարարություններ: Բայց ենթադրենք անգամ, որ որոշ հիմք ունեին պ. Մարուքեի հայտարարությունները. հարց՝ ինչո՞ւ էին Մազութի Համոն եւ Սերգե Կասպարիչը, բժիշկը (եթե միայն նրանց ձեռքերի գործն էր չորս թերթերի անհայտ անհետանալը)- ինչո՞ւ էին նրանք ցուցակում թողել հինգերորդ թերթը, որի մեջ գտնվեց իրենց անձնական բարեկամի, իրենց Տեղական Կոմիտեի անդամի- ընկ. Վառոդյանի անունը: Չենք հասկանում, մնում ենք շվարած, մնում ենք- ձեռնաթափ: Եվ ապա՝ ինչո՞վ պիտի շահագրգռված լիներ ընկ. Վառոդյանը վերոհիշյալ հայտարարություններն անելով. մի՞թե ցանկալի էր նրան իր անձնական բարեկամների, իր հետ միասին Տեղական Կոմիտեում նստող այդ պատկառելի ընկերների, վարկաբեկումը.- իհարկե ոչ, կասե ամեն մի խելքը գլխին անձնավորություն.- չէր կարող ցանկալի լինել, ինչքան էլ վիրավորված լիներ ընկ. Վառոդյանը՝ հայտնի ցուցակի երեւան գալով: Համոզված պնդում ենք մենք այս, մանավանդ, որ մի շաբաթ անց մի կտրուկ հայտարարությունով Տեղական Կոմիտեն թյուրիմացության հետեւանք հայտարարեց ընկ. Վառոդյանի հայտնի, այսինքն՝ գաղտնի ցուցակում գտնվելու պատմությունը. այո՛, մի շաբաթ անց Տեղական Կոմիտեն իր պատկառելի ստորագրությամբ հայտարարեց ու հաստատեց ի լուր հանրության, որ ցուցակում գտնվել է ոչ թե Վառոդյան

ազգանունը, այլ- Բարության եւ որ այդ Բարությանը ոչ մի կապ չունի ամենքին ավելի քան հայտնի ընկ. Վառոդյանի հետ: Եվ այդ հայտարարությունը լույս տեսնելու երկրորդ օրը,- մի ավելորդ ապացույց եւս, որ իզուր էին պ. Մարուքեի չարամիտ զրպարտություններն ընկ. Վառոդյանի հասցեին,- ընկ. Վառոդյանը նշանակվեց քաղաքի ու շրջանի միլիցիապետ ու առաջին գործը, որով միլիցիայում զբաղվեց ընկ. Վառոդյանը, երեւակայո՞ւմ եք՝ Կարո Դարայանի կորած դիակի որոնումն էր. ասում ենք դիակի, որովհետեւ ընկ. Վառոդյանի այդ նոր պաշտոնին անցնելուց ընդամենը երկու օր առաջ հանկարծ լուր տարածվեց քաղաքում, որ Կարո Դարայանը (որ մինչ այդ ընտրված էր շրջանի զորքերի կոմիսար) - անհայտ չարագործների ձեռով սպանված է գիշերվա ժամը 4-ին, իսկ թե ինչո՞ւ անպայման «4-ին»- անհայտ էր, ոչ ոք չգիտեր, բայց համառ կերպով ասվում էր, որ դեպքը պատահել է գիշերը՝ ճիշտ այդ ժամին:- Գետափին, սառույցի վրա (գետն այդպես ուշ էր հալչում նաիրյան այդ քաղաքում) միլիցիան գտել էր արյան կարմիր-կարմիր, քստմնելի հետքեր... Բայց մենք առաջ անցանք ու չասացինք այն հայտնի, այսինքն՝ գաղտնի ցուցակների մասին այն ամենը, ինչ որ հայտնի է մեզ: Մութ, մութ, խորհրդավոր պատմություն էր այդ պատմությունն, ընթերցո՛ղ,- եւ մենք չենք կարող չհիշատակել այստեղ այդ պատմության առթիվ այն ամենը, ինչ որ լսել ենք ու գիտենք, ինչ որ հայտնի է մեզ:

Ինչպես ասել ենք վերեւում՝ այդ պատմությունը, այսինքն՝ հայտնի (գաղտնի) ցուցակից չորս թերթ կորչելու պատմությունը, մեզ համար միանգամայն անհասկանալի պատճառով մարդիկ կապում էին այն հարցի հետ, թե գավառապետի տնից ելնելով՝ ո՞ւր էին գնացել Համո Համբարձումովիչը եւ բժիշկը մարտի 2-ի գիշերը. ահա հարց, որ մի շաբաթ ամբողջ զանազան փսփսուկների նյութ էր տալիս քաղաքի նիսիա (ինչպես Հաջի Օնիկ էֆենդին էր ասում) բնակիչներին եւ, առաջին հերթին,- պ. Մարուքեին: Բայց մենք խղճի ամենայն հանգստությամբ պիտի ասենք, որ մինչեւ վերջն էլ չէինք հավատում պ. Մարուքեի չարամիտ փսփսուկներին եւ չէինք էլ հավատա, եւ այժմ այս տողերը դու չէիր կարդա, ընթերցող, եթե մեր աչքին բավականին ծանրակշիռ մի հանգամանք շուտով չգար խախտելու մեր այդ անհողդողդ հավատքը. բանն այն է, որ Կարո Դարայանը եւս, իր եղերական վախճանից մի քանի օր առաջ, իմ, հեղինակիս, ներկայությամբ մի անգամ հայտարարեց մի բավականին

բազմամարդ ժողովում, որ տեսել է այն երեկո, ավելի ճիշտ կլինի ասել՝ մարտի 2-ի գիշերը, ժամը մոտավորապես 2-ին, Համո Համբարձումովիչին եւ բժշկին՝ «Մութ Տեղի» պաշտոնյայի հետ Հինգհարկանի Շենքից ելնելիս: Հարց՝ ի՞նչ գործ ունեին գիշերվա այդ ուշ ժամին այդ ակնածելի վայրում Համո Համբարձումովիչը եւ Սերգե Կասպարիչը- բժիշկը... Հիշում եմ, երբ տվեց այս հարցը Կարո Դարայանը Համո Համբարձումովիչին- դահլիճում, ուր տեղի էր ունենում ժողովը, տիրեց ահասարսուռ լռություն... զարհուրելի զարգանդ... բոլորը քար կտրած սպասում էին Համո Համբարձումովիչի պատասխանին: Թվում էր, թե եբրայական Եհովայի նման կամ ինչպես Զեւսը- կփրփրի ահա Համո Համբարձումովիչը,- այդ, մենք կասեինք՝ նաիրյան Արամազդը.- եբրայական Եհովայի կամ հունական Զեւսի նման ցասման կայծակ ու շանթ կթափե այդ եղկ մահկանացուի գլխին, այդ ողորմելի մահկանացուի, որ համարձակվում է կասկածի տակ առնել նրա՝ Համո Համբարձումովիչ Ասատուրովի, Տեղական Կոմիտեի նախագահի հեղափոխական կուսությունը:- Բայց- երեւակայո՞ւմ եք- կայծակը չճայթեց, շանթը չշողաց, ոչ էլ ամպրոպը որոտաց, այլ, պատկերավոր ասած՝ խաղաղարար անձրեւ, երկնային զովություն հորդեց նաիրյան Արամազդի աչքերից, հորդեց դառնաթախիծ արցունք... Ալեհեր գլուխը պրեզիդիումի սեղանին դրած (Համո Համբարձումովիչը պրեզիդիումի անդամ էր այդ ժողովում)- դառնաթախիծ թախծեց, դառնացած լաց եղավ Մազութի Համոն- եւ ամբողջ դահլիճը, ուր ներկա էին բավականին թվով սոխ զինվորներ ու մի քանի վակզալի բաշիբուզուկներ, ուր ներկա էր նաեւ,- օ, խայտառակություն,- պ. Մարուքեն,- այո՛, ամբողջ դահլիճը քար կտրած ահասարսուռ նայում էր Մազութի Համոյի հեկեկանքից ցնցվող, ալեհեր գլխին... «Փա՛ստ, փա՛ստ»,- վեր ցատկելով տեղից՝ դառնաձայն բացականչեց հեկեկանքի միջից Մազութի Համոն: Բայց փաստ չկար. կար- մթին կասկածանք, միակ փաստանման բանը- Կարո Դարայանի ձեռքին գտնվող հայտնի, այսինքն՝ գաղտնի ցուցակն էր, որի չորս թերթերը, ինչպես արդեն գիտենք,- պոկված էին ինչ-որ անհայտ ձեռքով:- Իսկ կարելի՞ է արդյոք՝ այդ չեղյալ թերթերի վրա հիմնվելով՝ խայտառակության սյանը գամել, կասկածի տակ առնել մի պատկառելի նաիրցու, մի ալեհեր հեղափոխականի հեղափոխական կուսությունը:- «Փա՛ստ»,- դառնաթախիծ բացականչում էր արցունքից խեղդվող ձայնով Համո Համբարձումովիչը, ու պատերի լռությունն էր միայն եւ դեմքերի զարմանքն ու ակնածանքը դառնորեն արձագանքում Համո Համբարձումովիչի արդարություն հայցող աղեկտուր

ձայնին... Ահա իրողությունն, ընթերցո՛ղ. փաստ չկար,- կար- մթին կասկածանք: Գրում եմ այնպես, ինչպես տեսել ու լսել եմ ես, առանց եզրակացություն հանելու. հանի՛ր, ինչ եզրակացություն որ կուզես, ընթերցող.- Պիղատոսի նման մենք լվանում ենք մեր ձեռքերն այս մութը, անհասկանալի, անիմանալի գործից: Ասենք միայն այն, որ փաստ չլինելու պատճառով Համո Համբարձումովիչն արդարացավ. անգամ ասում էր հետագայում, որ, եթե կենդանի մնար Դարայանը- նրան դատի պիտի կանչեր, հեղափոխական դատարանի առաջ պատիվ պիտի պահանջեր նրանից ինքը, բայց, դժբախտաբար, Կարո Դարայանն այնպես անսպասելի կերպով զոհ գնաց անհայտ չարագործների ձեռքից, եւ Համո Համբարձումովիչը մնաց չբավարարված:

Այո՛, մութը, կասկածելի, խորհրդավոր դեպքեր էին, որ տեղի ունեցան այդ շաբաթվա ընթացքում նաիրյան այդ քաղաքում, եւ այդ դեպքերից ամենամութն ու ամենակասկածելին Կարո Դարայանի մահն էր, նրա անսպասելի սպանությունն անհայտ չարագործների ձեռքով: Եվ իզուր էր, իր՝ միլիցիապետի բոլոր կարողությունները գործի դնելով, քրտնաթոր որոնում նրա դիակը, եւ նրան սպանողներին ընկ. Վառոդյանը.- նրանք չգտնվեցին: Ոչ միայն չգտնվեցին նրանք (այսինքն՝ Կարո Դարայանի դիակը եւ Դարայանին սպանողները), այլեւ շատ շուտով կորցվեց, հայտնի չէ, թե նաիրյան այդ քաղաքից ո՞ւր հեռացավ... պ. Մարուքեն: Ընկ. Վառոդյանը կասկած էր հայտնում, որ, ամենայն հավանականությամբ, Կարո Դարայանի սպանության հետ որոշ առնչություն պիտի որ ունենար պ. Մարուքեի անհետանալը. բայց այդ կասկածը կասկած էլ մնում էր եւ չէր կարող փարատվել, քանի դեռ չէր գտնված պ. Մարուքեն: Իսկ թե ո՞ւր էր գտնվում պ. Մարուքեն- միայն իրան էր հայտնի եւ մեկ էլ ծխականի վարժուհի, մեզ վեպիս առաջին մասից արդեն բավականին ծանոթ, օր. Սաթոյին, որ արդեն մի շաբաթից ավելի էր, ինչ երեկոյան դասընթացներ էր կազմակերպել կայարանի մոտ գտնվող ինչ-որ կասկածելի մի տեղում, ուր նա ինչ-որ բաներ էր պարապում վակզալի բաշիբուզուկների, այսինքն՝ կայարանի բանվորների հետ՝ օրական մի ժամ պարբերաբար, տոն օրերին- երկու, անգամ երեք ժամ: Բայց այդ մասին, իհարկե, ոչ ոք չգիտեր, չգիտեր անգամ ինքը՝ ընկ. Վառոդյանը: Եվ այժմ էլ քաղաքում այդ օր. Սաթոն էր ահա, որ բռնել էր պ. Մարուքեի տեղը՝ զանազան լուրեր, զրպարտություններ եւ մութ կասկածանքներ տարածելու գործում: Բայց օր. Սաթոյի եւ պ. Մարուքեի մեջ կա մի խոշոր տարբերություն.

նախ՝ օր. Սաթոն կին էր, իսկ պ. Մարուքեն- տղամարդ (ամենաէական տարբերությունը)- եւ ապա- որ ավելի կարեւոր էր զուցե, քան առաջին հանգամանքը,- այս հարցում մեր կարծիքը տարբերվում է Հաջի Օնիկ էֆենդու կարծիքից,- օր. Սաթոն ավելի էր զգույշ ու խորամանկ, քան պ. Մարուքեն: Փա՞ստ. թեկուզ հենց այն, որ, չնայած օր. Սաթոյի տարածած մի շարք բավականին մութ ու պատասխանատու լուրերին- ոչ ոք չէր իմանում այդ լուրերի իսկական աղբյուրը. օր. Սաթոն այնպես էր տարածում այդ լուրերը, որ լուրերի սկզբնական աղբյուրը, այսինքն՝ օր. Սաթոն, մնում էր, ինչպես ասում են, ստվերում. մնում էր- անհայտ: Ահա այս էր պատճառը, որ, չնայած ընկ. Վառոդյանի թափած գերմարդկային ջանքերին- նրան, ընկ. Վառոդյանին, այնպես էլ չէր հաջողվում այդ լուրերի առաջն առնել. իսկ այդ բանում ո՞վ կարող էր ավելի շահագրգռված լինել, քան ինքը միլիցիապետը, այսինքն՝ նույն ընկ. Վառոդյանը: Եվ իր այս շահագրգռման համար ասում են, ընկ. Վառոդյանն ուներ ավելի քան ծանրակշիռ պատճառներ: Օրինակ՝ թեկուզ հենց այն, որ այդ լուրեր տարածող աղբյուրը քաղաքում բաց էր թողել այնպիսի մի լուր, որից նույնիսկ ընկ. Վառոդյանի մազերը, ինչպես ասում են, բիզ-բիզ էին կանգնում- էլ ո՞ւր մնաց ուրիշներինը: Այդ լուրեր տարածող աղբյուրը Կարո Դարայանի սպանության առթիվ քաղաքում տարածել էր, որ զուր տեղն է պ. միլիցիապետը այնքան եռանդուն կերպով որոնում Դարայանի սպանողներին: Այդ աղբյուրին նայելով՝ միլիցիապետը Դարայանին սպանողներին կարող էր գտնել... իրենից չափազանց մոտիկ, եթե ոչ- հենց իր մեջ... Այսպիսի ահա անպատկառ լուրեր էր տարածում ստախոսության այդ անպատկառ աղբյուրը, եւ նրան շատ թանկ կնստեր նման հանցագործությունը, եթե նա ընկներ հեղափոխական իշխանության, այսինքն՝ ընկ. Վառոդյանի ձեռքը: Բացի այս՝ ստերի այդ աղբյուրը տարածում էր լուրեր, որ իբր թե քաղաքում նոր հաստատված հեղափոխական իշխանությունը, այսինքն՝ Տեղական Կոմիտեն հանձինս Համո Համբարձումովիչի, բժշկի, ընկ. Վառոդյանի եւ այլոց, ազատ է արձակել, երեւակայո՞ւմ եք- գավառապետին, ոստիկանապետին եւ «Մութ Տեղի» գլխավոր վարիչին- ահա՛ թե ինչ: Եվ մի՞թե այդ միեւնույն աղբյուրը չէ՞ր, որ շրջանառության էր հանել մի այլ, ոչ պակաս անպատկառ, զրպարտություն եւս այն մասին, թե քաղաքի պարետը (բարձրահասակ սպան) գաղտնի պահվում է- հենց իրա՝ Համո Համբարձումովիչի բնակարանում:- Այսպիսի լուրեր էր տարածում ահա Կարո Դարայանի սպանությունից եւ պ. Մարուքեի

անհետանալուց հետո ստոր պրովոկացիաների (ինչպես ասում էր ընկ. Վառոդյանը) այդ աղբյուրը, այսինքն՝ օր. Սաթոն, եւ այս լուրերն այնքան էին ջղայնացնում ու անհանգստացնում քաղաքի հեղափոխական իշխանությանը (Տեղական Կոմիտեին), որ նա, այսինքն՝ քաղաքի իշխանությունը (Տեղական Կոմիտեն) հարկադրված եղավ ի վերջո մի ընդարձակ հայտարարությունով պաշտոնապես հերքել քաղաքում տարածված այդ պրովոկացիաները, որոնք, ինչպես ասված էր հայտարարության մեջ, նպատակ ունեն փորել ժողովրդական իշխանության դեռ նոր հաստատված հիմերը եւ վերականգնել ցարական լպիրշ ռեժիմը:- Այսպես էր ասված այդ հայտարարության մեջ. ավելին՝ ժողովրդի թշնամի եւ ցարական ստոր վարձկան էր հայտարարվում այդ հայտարարության մեջ նման պրովոկացիաներ տարածողը, իսկ հայտարարության ամենավերջում ասված էր, որ, ճիշտ է, հեղափոխության թշնամի մի շարք ցարական վարձկանների ջանքերով բանտից փախած են եղել գավառապետը, ոստիկանապետը, «Մութ Տեղի» գլխավոր վարիչը եւ քաղաքի պարետը, բայց հեղափոխական իշխանության (կարդա՝ Տեղական Կոմիտեի) ջանքերով, նրա ձեռք առած կտրուկ միջոցներով ժողովրդի թշնամիները գտնված են եւ վերստին փակված բանտում: Եվ ճիշտ որ, վերոհիշյալ անձնավորությունները վերստին ձերբակալված եւ փակված էին, բայց- «Ո՞ր բանտում»,- հարցնում էր օր. Սաթոն խորամանկ: Ու ինքն էլ պատասխանում էր հարցին՝ «Զինվորական բանտում»:- Լավ, լինի զի՛նվորական, ի՞նչ տարբերություն,- կարող էր ասել միամիտ խոսակիցը, եւ եթե այդպես ասեր միամիտ խոսակիցը- օր. Սաթոն բաց կաներ նորից իր սուտերի տոպրակը եւ արագ-արագ, զանազան «լսել եմ»-ներով ու «ո՞վ գիտե»-ներով քողարկված, մանվածապատ նախադասություններ կթափեր խոսակցի գլխին- կարծիքներ ու կասկածներ: Չտեսնված լեզու ուներ այդ ծամը կտրած օրիորդը, որի «օրիորդությունը» վաղուց արդեն կասկածի էր ենթարկել ընկ. Վառոդյանը: Գիտեր՝ ո՞ւմ հետ պետք է խոսել եւ ո՞ւմ հետ ի՛նչ լեզվով պետք է խոսել: Ինչպես ասում էին քաղաքում՝ «դարմանի տակի ջուր» էր, իսկ որ օր. Սաթոն տեսքից՝ անմեղ, ներսից՝ սատանա: Երեւակայո՞ւմ եք՝ անգամ վերոհիշյալ «վերստին ձերբակալությանց» մասին օր. Սաթոն տարածել էր քաղաքում անհավատալի ստեր. տարածել էր, որ իբր վերոհիշյալ անձնավորություններին «վերստին ձերբակալել» է ոչ թե քաղաքի իշխանությունը (այսինքն՝ Տեղական Կոմիտեն), այլ զինվորական.- եկեք ու հավատացեք... Մի խոսքով՝ ստերի կատարյալ տոպրակ էր դարձել Կարո Դարայանի

սպանությունից եւ պ. Մարուքեի անհետանալուց հետո այդ օր. Սաթոն, եւ մենք ցավում ենք, որ նա ժամանակին չընկավ հեղափոխական իշխանության, այսինքն՝ ընկ. Վառոդյանի ձեռքը:

Բայց սուտը՝ սուտ, իսկ ռուսական առածն ասում է. «Չիք ծուխ առանց կրակի»: Իհարկե, ռուսական այդ առածը եւս կարելի է այնպես շուռ տալ, որ դուրս գա,- սատանան գիտե, թե ինչ. որ դուրս գա այն, ինչ ով ուզում է՝ նայած քեֆին ու ճաշակին: Օրինակ, այդ առածից ելնելով, կարելի է ասել, որ ներկա դեպքում «ծուխը» օր. Սաթոյի տարածած ստերն էին, իսկ «կրակը»- հենց ինքը՝ օր. Սաթոն... Եվ սա այսպես էլ էր, որովհետեւ վերստին ձերբակալությանց օրից մի երկու օր անց այնպիսի մի ծուխ տարածեց այդ կրակը, այսինքն՝ օր. Սաթոն, որ բոլոր քաղաքացիք, մանավանդ Համո Համբարձումովիչը, բժիշկը եւ ընկ. Վառոդյանը ստիպված էին քթները պահել, որպեսզի չխեղդվեն այդ ծխից, ավելի լավ է ասել՝ այդ ծխանման գարշահոտությունից, որ տարածում էր այդ «կրակը»: Իսկ այդ ծուխը կայանում էր նրանում, որ օր. Սաթոն, ո՞վ գիտե ի՞նչ անիմանալի միջոցներով ու ճանապարհներով, ձեռք էր բերել ինչ-որ մի միֆական նամակի պատճեն եւ կարդում էր սրան-նրան, այսինքն՝ նրանց, ում վրա ինքը վստահություն ուներ եւ դրանք էլ իրենց հերթին տարածում էին, ում վրա որ վստահություն ունեին, վերջ ի վերջո այնպես էր դուրս գալիս, որ ոչ ոք չգիտեր, թե ո՞վ է այդ լուրերի իսկական ակը. մեկը լսում էր մյուսից եւ պատմում էր մյուսին- ահա եւ ամբողջը:- Ինձ էլ է կարդացել այդ միֆական նամակի պատճենն օր. Սաթոն, բայց ես, դժբախտաբար, մոտավորապես միայն հիշում եմ հիմա այդ միֆական նամակի բովանդակությունը: Հետաքրքիր նամակ էր այդ նամակը, ընթերցո՛ղ, բայց ավելի հետաքրքիր էին օր. Սաթոյի կոմենտարիաներն այդ նամակին: Եվ ավելի քան հետաքրքիր էր այն (եւ այս հանգամանքը մինչեւ վերջն էլ ինձ համար չլուծված առեղծված մնաց), թե ինչպե՞ս էր այդ նամակը, հասցեագրված լինելով իրեն- Մազութի Համոյին,- ընկել օր. Սաթոյի ձեռքը. նու, եթե ոչ իսկական նամակը, գոնե պատճենը: Գուցե՞ օր. Սաթոն հենց ի՛նքն էր հնարել այդ միֆական նամակը եւ իր հնարածից պատճեն հանել, որպեսզի յուղ լցնի իր առանց այդ էլ բավականին լավ աշխատող անիվին, այսինքն- լեզվին... Ո՞վ իմանա: Մենք պատմում ենք այն, ինչ որ լսել ենք իրենից- օր. Սաթոյից, եւ թողնում ենք, որ ընթերցողն ինքը հավատա կամ չհավատա օր. Սաթոյին:

Այդ միֆական նամակը գրված էր զինվորական բանտից եւ հասցեագրված էր Համո Համբարձումովիչ Ասատուրովին: Նամակի հեղինակն էր- (եթե, իհարկե, ընդունենք, որ նամակն իսկապես գրված էր մեկի կողմից, ու ոչ թե հնարված օր. Սաթոյի ուղեղում)- վերստին ձերբակալված գավառապետը: Այստեղ կարելի է ավելացնել օր. Սաթոյի հետաքրքիր կոմենտարիան: Օր. Սաթոյի ասելով՝ նամակը գրելուն գավառապետին առիթ է տվել վերստին ձերբակալությունը, որի մեջ, գավառապետի կարծիքով՝ անշուշտ մատ ունեցել է Մազութի Համոն: Օր. Սաթոն եւս այս հարցում համամիտ էր գավառապետին, իսկ թե ինչո՞ւ է Մազութի Համոն մատ խառնել գավառապետի վերստին ձերբակալությանը- դա պարզ է ինքնըստինքյան, ասում էր օր. Սաթոն, թեկուզ մեզ համար դա այնքան էլ «պարզ չէ ինքնըստինքյան»,- ինչպես ասում էր օր. Սաթոն: Բայց անցնենք նամակին: Հիշում եմ՝ նամակն սկսվում էր «Հարգելի պ. Ամո Ամբարձումովիչ» խոսքերով, եւ ես այդ խոսքերը կարդալիս, չգիտեմ ինչու, իսկույն պատկերացրի գավառապետի՝ չոր, դեղնած, իսկապես որ սոխի գլուխը, զայրացկոտ զինվորականի նույնպես չոր, պաշտոնական հայացքը եւ ցանցառ մորուքը: Զայրույթի ու ցասման ահասարսուռ բոթ փչեց դեմքիս գավառապետի այդ հասարակ, քաղաքավարի խոսքերից եւ, թերեւս, մասամբ էլ իմ այս հոգեկան շփոթմունքն էր պատճառը, որ ես հիմա այնքան էլ լավ չեմ հիշում նամակի առաջին նախադասությունները: Հիշում եմ այն, որ նամակն սկսվում էր հարձակողական նախադասություններով: Նամակի առաջին իսկ խոսքերից երեւում էր, որ հաստատ կերպով վճռել է կյանքի ու մահվան գրոհի դիմել այդ կալանված առյուծը, այդ հուժկու զինվորականը, որի պատահական անկումից օգտվելով՝ ինչպես ասված էր նամակում, քացի էին տալիս նրա ազնվական կողերին անգամ երկարականջ քեռիները:- Այսպիսի մի այլաբանական նախադասությունով էլ, կարծեմ հենց սկսվում էր գավառապետի նամակը. նախադասությունը չեմ հիշում, բայց հիշում եմ օր. Սաթոյի կոմենտարիան «երկարականջ քեռիների» մասին. նրա կարծիքով այդ այլաբանական խոսքի տակ պետք է նապաստակներ հասկանալ, այնինչ իմ կարծիքը բավականի՛ն տարբերվում էր օր. Սաթոյի կարծիքից: Այո՛, ինչո՞ւ նապաստակներ, եւ ոչ ուրիշ մի բան... Բայց անցնենք նամակին: Կրկնում ենք՝ մենք բառացի չենք հիշում այդ միֆական նամակի բովանդակությունը, բայց բավականին լրիվ հիշում ենք նամակի ընդհանուր իմաստը, որ դժբախտաբար պիտի պատմենք մեր տկար լեզվով, տեղ-տեղ միայն բառացին մեջ բերելով նամակի այն ցայտուն տողերը, որ

այն ժամանակ մեխվեցին մեր ուղեղում եւ մնացին այնտեղ- եւ, կարծում ենք, որ այդպես էլ մեխված կմնան այնտեղ- ընդմիշտ ու հավիտյան:

Նամակն, ինչպես ասացինք, սկսվում էր դառնագին հոխորտանքով, բայց գնալով փոխվում էր դառնաթախիծ տրտունջի եւ նորից ծայր էր առնում հոխորտանքն ու մեղադրանքը եւ, նորից տրտունջի դառնության փոխվելով՝ վերջանում էր հույսով, որ «ամենակարող տերը» կվերականգնի արդարությունն Ահեղ Դատաստանի օրը, որին նա հավատում էր այնպես, ինչպես հավատում է Նորին Կայսերական Մեծության մոտալուտ հաղթանակին: Բայց այս չէ էականը եւ ամենահետաքրքիրն այդ նամակում, այլ այն, թե ի՞նչ լեզվով էր այդ նամակում խոսվում Համո Համբարձումովիչի եւ մանավանդ բժշկի - Սերգե Կասպարիչի մասին, այստե՛ղ է ահա նամակի ամենայուղալին ու ամենահյութալին եւ նամակի այդ տողերն էին ահա, որ հատուկ բավականություն էին պատճառում օր. Սաթոյին, վառում նրա հայացքը եւ թքակալում նրա, ինչպես ասում էին քաղաքում- շնական շրթունքները: «Մի՞թե դուք չէիք, հարգելի Ամո Ամբարձումովիչ,- ասվում էր այդ միֆական նամակում,- որ լիզում էիք իմ պնակները եւ բռնում իմ շուբան ամեն անգամ, երբ իմ բնակարանն էիք գալիս- եւ մի՞թե ձեր անզուգական դուստր Սեւաչյա Պրիմադոննան չէ՞ր, որ հանգստացնում էր իմ, ծանր պաշտոնից քայքայված, ծերությունից հյուծված, վաստակած ջղերը... Իսկ ո՞վ էր, ո՞վ էր, արդյոք,- ասվում էր ապա այդ միֆական նամակում,- որ նաիրյան գեղեցկուհիներ էր մատակարարում գաղտնի բաժանմունքի վարիչ Անգելեեւին, եթե ոչ այսօրվա «Շրջանային Կոմիսար» Սերգե Կասպարիչը, երեկվա քաղաքային բժիշկը... Իսկ ո՞վ էր,- ասվում էր նամակում,- որ Տեղական Կոմիտեի կնիքով եւ «Տեղական Կոմիտե» ստորագրությամբ ահաբեկող նամակ ուղարկեց երկու տարի առաջ մեր քաղաքում հսկայական պրակտիկա ձեռք բերած բժիշկ Կարչեւսկուն, որպեսզի վերջինս իսկույն եւեթ թողնի մեր քաղաքը եւ հեռանա սատանաների գիրկը- ո՞վ էր այդ անողը, եթե ոչ նույն ինքը, ձեր (այսինքն՝ Մազութի Համոյի. Ե. Չ.) անզուգական բարեկամ, ներկայումս «Շրջանային Կոմիսար», Սերգե Կասպարիչը, նախկին քաղաքային բժիշկը... Եվ ո՞վ էր, որ,- ասվում էր ապա այդ զարմանալի նամակում,- իր տան արտաքնոցի տախտակները թակարդի նման հարմարեցնելով՝ օրը ցերեկով իր տան արտաքնոցում խեղդեց իր հարազատ, խելագարված կնոջը, որպեսզի ազատվի նրանից, իբր մի ավելորդ

բալաստից.- ո՞վ էր, ո՞վ էր այդ ամենի դիվային հեղինակը, եթե ոչ- էլի ինքը, նույն ինքը, բժիշկ Սերգե Կասպարիչը, Ձեր Տեղական Կոմիտեի անդամը, ներկայումս «շրջանի կոմիսար» բժիշկ Սերգե Կասպարիչը... Իսկ դո՞ւք,- դիմելով իրան՝ Համո Համբարձումովիչին՝ ասում էր ապա գավառապետը, այսինքն՝ միֆական այդ նամակը,- դուք չէի՞ք միթե, հարգելի Ամո Ամբարձումովիչ, որ իմ ստորադաս պաշտոնյա, շրջանի նաչալնիկ Շմերլինգի միջոցով ձեր «Լույսի» պահեստներից աբոզներով նավթ էիք ուղարկում մեր եւ մանավանդ ձեր դարավոր ոսոխին, անօրեններին, եւ ոսկիներ դիզում մեր ու ձեր եղբայրների թափած ծով արյան գնով... Դո՛ւք էիք, հարգելի Ամո Ամբարձումովիչ, դո՛ւք,- եւ իզուր եք դուք այսօր բանտ քշում ինձ, ծերուկիս, մոռանալով այն աղուհացը, որ տարիներ շարունակ վայելել եք իմ լիառատ սեղանից...»: Այսպիսի՛ ահա չլսված ամբաստանություններ կային իրա- Համո Համբարձումովիչի եւ բժիշկ Սերգե Կասպարիչի հասցեին այդ միֆական նամակում, եւ մենք չենք կասկածում, որ այդ միֆական նամակը հետեւանք չէր օր. Սաթոյի փչացած ուղեղի: Այո՛, ես չեմ էլ կասկածում, որ այդ միֆական նամակը կարող էր այլ աղբյուր ունենալ, քան օր. Սաթոյի փչացած ուղեղը, որ ի բնե փչացած լինելուց բացի՝ տարիներ շարունակ կրել էր իր վրա մի ավելի եւս փչացած, ավելի քան շնական ուղեղի- պ. Մարուքեի ուղեղի- ազդեցությունը:

Ինչեւէ, ընթերցո՛ղ... Մութ ու խորհրդավոր պատմություններ էին դրանք, որ մինչեւ վերջն էլ ինձ, հեղինակիս համար այնպես էլ մութ մնացին ու մնացին խորհրդավոր: Հիմա էլ, երբ այստեղ նկարագրված դեպքերից անցել են արդեն բավականին տարիներ, երբ բավականին ջուր է հոսել, ինչպես ասում են, պատմության ջրաղացի անիվին եւ մեր նկարագրած դեպքերից ու անձնավորություններից շատ շատերն արդեն պատմության, այսինքն՝ անգոյության գիրկն են անցել- հիմա անգամ, ընթերցո՛ղ, երբ ես մտքով շուռ եմ գալիս, դառնում եմ ետ եւ աշխատում եմ վերհիշել ու հասկանալ այն ժամանակ կատարված դեպքերն ու պատմությունները- այդ դեպքերն ու պատմություններն ինձ պատկերանում են, ինչպես պղտոր մի հոսանք, մութը մի գետ, որ անցնում է հորդած եւ խեղդում իր դեմն առնել ցանկացող ամեն մի խթան ու արգելք: Հիշում եմ՝ մի անգամ, երբ ես դեռ երեխա էի, հորդել էր մեր այդ նկարագրած քաղաքի գետը. գիշեր էր, երբ ես ու եղբայրս, տնից փախչելով, գնացինք հորդած գետին նայելու: Մութն էր. կարծես մազութ էին քսել երկնքին, ու հոսել էր մազութը

երկնքից եւ ծածկել քաղաքը, փողոցները, շենքերն ու մարդկանց: Մենք ապրում էինք Վարդանի կամուրջի մոտերքը, բերդի տակ, եւ տնից իջնելիս մենք կարծում էինք, որ կհասնենք գետափնյա փողոցը եւ այնտեղից կնայենք հորդած ջրին: Բայց մենք չարաչար սխալվեցինք: Մեր տնից դեպի հիշյալ փողոցն էր իջնում ծուռ ու մուռ մի արահետ. դեռ նոր էինք շուռ եկել այդ քարքարոտ արահետի վերջին ոլորտը, որից հետո արահետն ուղիղ դեպի գետափնյա փողոցն էր իջնում, երբ մեր աչքերի առաջ փռված խավարի մազութը բաժանվեց երկու մասի. վերը՝ մուգ, իսկ ներքեւը բաց գույնի մազութ էր, որ հազիվ էր տարբերվում վերի մազութից: Վարի համեմատաբար բաց գույնի մազութը- հորդած գետն էր, ջուրը, որ, լցրել էր գետափնյա փողոցն ու ծանր շնթռկել լայն ու ահավոր, ինչպես մի առասպելական վիշապ: Մի ծանր, ճնշող, դեպի իր գիրկը քաշող խոնավություն էր շնչում հորդած գետը, ու ես կպչում էի եղբորս, որ ինձ իր գիրկը չքաշի, չխեղդի, կուլ չտա առասպելական այդ վիշապը: Դեմը, բաց գույնի մազութի խոնավ գրկից ելնելով՝ իր համեմատական մուգությամբ հետզհետե լուծվելով վերի մութի մազութին՝ տեսիլանման երերում էր ահռելի մի սեւություն, հսկա մի քարակույտ. Վարդանի կամուրջն էր այդ, որ սեւին էր տալիս մազութանման մշուշում: Մեր մոտ կանգնած մարդիկ վիճում էին, թե կդիմանա՞ արդյոք Վարդանի կամուրջը հեղեղած ջրի ահռելի հոսանքին, թե ոչ. կային, որ կարծում էին կդիմանա, ու կային, որ կարծում էին, թե ոչ: Այդ միջոցին էր ահա, որ գետի վերի կողմից, ծանր ողողած հեղեղատի միջից, լսվեց զարհուրելի, սիրտ ճեղքող, անպատմելի մի ճիչ, ու ճիշտ նույն վայրկյանին սրընթաց հեղեղատի վրա երեւաց փոքրիկ-փոքրիկ, վախկոտի պուշ աչքի նման ահաբեկված թարթող, սրընթաց մի կրակ: Ես ավելի պինդ սեղմվեցի եղբորս, գրկեցի նրա ոտքը. շուրջս հավաքված մարդիկ բարձրացրին մի ահախառն աղմուկ, շարժվեցին տեղերում ու, չգիտեմ ինչու, հայհոյեցին իրար. այդ ժամանակ մի վերջին անգամ եւս խոնավ հեղեղատի ծանրանիստ մազութի միջից լսվեց զարհուրելի սրտակեղեք ճիչը. վախկոտի աչքի պես ահաբեկված թարթող պուշ կրակը սրընթաց սուրաց դեպի Վարդանի կամուրջի սեւասեւ ուրվականը- եւ ամեն ինչ կորավ, լռեց, սուզվեց մազութանման հեղեղատում: Պարզվեց, որ քաղաքի գետափնյա փողոցներից պոկված մի նավակ էր դա, որ հոսանքի մեջ ընկնելով՝ քշվել էր դեպի Վարդանի կամուրջը: Եղբորս կողքին կպած՝ դողալով տուն եկա ես, պառկեցի մորս կողքին- եւ ամբողջ գիշերը մինչեւ լույս իմ մանկական ուղեղի միջից ծանրանիստ ընթանում էր հորդած գետը, ուղեղիս ահաբեկված մազութում կախված՝

օրորվում էր Վարդանի կամուրջի սեւասեւ ուրվականը, ու այդ սեւասեւ ուրվականին դիպչելով՝ սրտակեղեք մի ճիչ էր արձակում վախկոտի աչքի պես ահաբեկված թարթող, պուշ կրակը: Առավոտյան արթնանալիս իմ առաջին գործն այն եղավ, որ ես շնչակտուր վազեցի դեպի գետը եւ- օ՛, զարմանք եւ ուրախություն, տեսա, որ գետափնյա փողոցից արդեն քաշվել էր առասպելական վիշապը. գետն իր ափերն էր մտել եւ հոսում էր հանդարտ, իսկ Վարդանի կամուրջը գետի մեջտեղն արքայաբար նստած՝ չորացնում էր իր թրջած կողերը ելնող արեւի պայծառ ճառագայթների ներքո... Մանկական միամտությամբ նայեցի Վարդանի կամուրջի կողերին դիպչող մթափրփուր ջրին, կարծելով, որ այնտեղ կգտնեմ որեւէ հետք գիշերվա սրընթաց սահող նավակից եւ անգամ, - օ՛, մանկական անմեղություն,- վախկոտի պուշ աչքի նման ահաբեկված թարթող այն կրակից... Բայց ո՛չ մի հետք, իհարկե, չկար, եւ չէր էլ կարող լինել այդ բոլորից: Վարդանի կամուրջն էր միայն, որ արքայաբար կուրծքը դեմ էր տվել մթափրփուր ջրերին... Մանկությանս օրերին կատարված այս ինքնին աննշան դեպքից անցել են համարյա քսանից ավելի երկար ու ձիգ տարիներ, բայց ես հիշեցի հանկարծ ինքնին աննշան այդ դեպքը՝ նաիրյան մեր նկարագրած քաղաքի վերոհիշյալ դեպքերն ու պայմանները մտաբերելիս: Իսկ պատահական բա՞ն է արդյոք, երբ մարդ այս կամ այն դեպքի կամ պատմության առիթով հիշում է մի ուրիշ, այլ դեպք կամ պատմություն:- Իհարկե, պատահական բան չէ, ընթերցող- եւ խորը, խորը, խորագույն իմաստ կա նման, գիտական տերմինով ասած՝ գաղափարների ասոցիացիայում, եւ ներկա դեպքում այդ խորագույն իմաստն ինձ համար պարզ է ավելի, քան արեւի լույսը: Եվ իրոք. իր ափերից ելած, հորդած գետ չէ՞ր միթե այն օրերում նաիրյան այդ քաղաքի կյանքը, մի կյանք, որի վրա, ինչպես հայտնի է քեզ, ընթերցո՛ղ, վաղուց հետե կախված էր մազութանման մշուշը, որը վաղուց հետե ծածկել էր, ինչպես հայտնի է քեզ, նաիրյան այդ քաղաքն ու բնակիչներին, շենքերն ու մարդկանց: Հեղեղել էր կյանքը, ելել էր այդ օրերին իր սովորական ափերից եւ, թերեւս, իզուր էր Կարո Դարայանը փորձել լույսի նշույլ մտցնել, վերոհիշյալ դժբախտ նավաստիի նման թարթել իր տարտամ կրակը, մազութանման մուժում:- Օ, պիտի իմանար, պիտի հասկանար այդ Կարո Դարայանը, որ զարնվելու է իր նավակը «Վարդանի կամուրջի» արքայանիստ քարակույտին, որ վաղուց սովոր էր արդեն իր քարակերտ կուրծքը դեմ անել ամեն հոսանքի ու հեղեղատի: Եվ ճիշտ որ. վերը նկարագրած դեպքից հետո ես հեռացա նաիրյան այդ քաղաքից եւ վերադարձա

մի տարի անց, ու ի՞նչ. նո՛ւյնն էր տպավորությունս, ճիշտ նույն տպավորությունը, որ ես ստացել էի մանկությանս օրերին՝ հորդած գետը տեսնելու գնալուս հաջորդ առավոտը. ճիշտ այն ժամանակվա նման ես տեսա, որ համարյա թե իր սովորական ափերն է մտել նաիրյան այդ քաղաքի առօրյա կյանքի այն ժամանակ այնպես մթափրփուր հորդած, հեղեղած գետը- եւ նույն ակնածանքով ու ահավոր հիացմունքով ես տեսա մեր ամենահարգելի Մազութի Համոյին, որ, ինչպես գետի հորդելուց հետո Վարդանի կամուրջը, արքայակերպ կեցել էր կյանքի արդեն բավականին հանդարտած, համարյա իր ափերը մտած հոսանքի մեջտեղը եւ այլեւս իզուր էին նրա, այսինքն՝ Մազութի Համոյի, հասարակական դիրքի քարակերտ պատերին դիպչել փորձում արդեն իջած գետի մի քանի մանրիկ, մթափրփուր ալիքները... Բարեբախտաբար այլեւս երեխա չէի ես այդ ժամանակ, որպեսզի այդ լորճուկ (ընկ. Վառոդյանի խոսքով ասած) ալիքների փրփուրում փնտրեի ինչ-որ նավաբեկման հետքեր: Օր. Սաթոն էր միայն, որ դեռ շարունակում էր տարածել քաղաքում իր անսպառ ստերն ու պրովոկացիաները,- բայց էլ ո՞վ էր օր. Սաթոյին, այդ «ծամը կտրած լրբին» կարեւորություն տվողը: Մազութի Համոն կար ու կանգնած էր էլի, ինչպես Վարդանի կամուրջը, անսասան ու քարակերտ: Կանգնած էր նաիրյան այդ քաղաքի ու իսկական, այո՛, համարյա թե մարմնացած Նաիրիի, այսպես կոչված, «գրավված վայրերի» կենտրոնում, որպես «Ընկերության» լիազոր ներկայացուցիչ, Տեղական Կոմիտեի եւ Քաղաքային Խորհրդի նախագահ, Զինվորական Բարձրագույն Ատյանի անդամ- եւ այլն, եւ այլն, եւ այլն,- եւ նրա, Մազութի Համոյի ուղեղում էլի նաիրյանն էր ու հավիտենականը՝ արդեն մարմնավորվել սկսող երկիր Նաիրին...

Շատ ջրեր էին հոսել նաիրյան այդ քաղաքի եւ ընդհանրապես Նաիրիի ու աշխարհի վրայով այդ մի տարվա ընթացքում, երբ ես բացակայում էի քաղաքից ու Նաիրիից, եւ ամենանշանավորն ու կարեւորը այն էր, որ այդ ջրերի հետ մեկտեղ հոսել էին նաեւ սոխական բանակները Նաիրիից ու այդ քաղաքից, եւ Նաիրին ու քաղաքը մնացել էին Մազութի Համոյին ու նաիրցիներին. երազյալը, կարծես, երկրային էր դարձել. Մազութի Համոյի ուղեղից սահելով՝ մարմնավորվել էր կարծես երկիրը Նաիրի: Հավաքել էր «Ընկերությունը» եւ գրավված վայրերն էր ուղարկել բազում ու անհամար նաիրյան ռազմիկներ. դարերի մուժից, մշուշից ելնելով՝ հառնել էր, վերջապես, նաիրյան կարծր ոգին.

գրավել էր շեներ ու քաղաքներ. բռնել էր բերդը: Անթիվ տարիներից, դարերից հետո վերստին նահրյան դարձած Առաքելոց եկեղեցում նահրյան հնամյա բարբառով աստվածահաճո պատարագ էր անում արդեն տեր Հուսիկ քահանան- Խաչագողը, ու բերդի ամենաբարձր աշտարակի վրա եռագույն դրոշ պարզած՝ բերդի հրամանատարն էր արդեն ընկ. Վառոդյանը: Քաղաքի ու շրջանի, արդեն ամբողջովին նահրյան դարձած, դպրոցների վարիչ էր Արամ Անտոնիչը, դպրոցի (այսինքն՝ ռեալականի) տեսուչը, իսկ Գեներալ Ալոշը, Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆը, կոշկակար Սիմոնը- Կլուբի Մեյմունը, մանրավաճառ Կոլոպոտյանը եւ շատ ու շատ ուրիշ պատկառելի նահրցիներ դարձել էին Քաղաքային Խորհրդի անդամներ: Մենակ Մեռելի Ենոքն էր իր տեղը մնացել. Քոռ Արութի հետ մեկտեղ նա էլի չայ ու կալբաս էր ծախում վակզալի մեյդանում,- եւ ոչինչ՝ գոհ էր իր վիճակից: Մոռացանք Օսեփ Նարիմանովին. հաշտարար դատավոր Օսեփ Նարիմանովը միանգամայն լքել էր իր հաշտարար գործունեությունը եւ բժիշկ Սերգե Կասպարիչի հետ միասին դարձել էր Զինվորական Գերագույն Ատյանի անդամ, այսինքն՝ մենակ ինքը՝ Օսեփ Նարիմանովն էր անդամ, իսկ բժիշկ Սերգե Կասպարիչը- այդ Գերագույն Ատյանի նախագահն էր, քաղաքի ու շրջանի ամենաազդեցիկ մարդը, այո՝ նույնիսկ ասողներ կային, որ ավելի ազդեցիկ, քան ինքը՝ Մազութի Համոն:- Բայց մենք, իհարկե, չենք հավատում նման երեխայամիտ կարծիքներին: Այսպիսով, ինչպես տեսնում եք, ամեն ինչ փոխվել էր եւ ընդունել միանգամայն նահրյան կերպարանք: Նահրի՛ն էր, հին, երազյալ, հավիտենական Նահրին, որ տարիների մուժից, մշուշից ելած՝ առել էր իրական կերպարանք: Եվ ամեն ինչ լավ էր գնում, նույնիսկ կարելի է ասել, որ կատարյալ հանգիստ ու խաղաղություն կտիրեր նահրյան այդ քաղաքում եւ շրջանում, եթե չլինեին մի շարք ստոր, անպատկառ, նահրադավաճան մարդիկ, որոնք խանգարում էին նորաստեղծ նահրապետության հանգիստը: Եվ ո՞վ գիտե՝ կկատարվեի՞ն արդյոք հետագա դժբախտ ու ահավոր դեպքերը, եթե չլինեին այդ ստոր, անպատկառ նահրադավաճան մարդիկ: Երեւակայո՞ւմ եք՝ դրանք, այդ ստոր, դավաճան, անպատկառ մարդիկ, դեմ էին «գրավված վայրերի» պաշտպանության. ինչ-որ խաղաղություն էին պահանջում այդ ստոր, դավաճան մարդիկ, երբ դեռ չէր գետնահարված ոսոխը. ավելին՝ երբ իր վերջին հորդաները հավաքած՝ թափթփուկ բանակներով պատրաստվում էր «գրավված վայրերը» խուժել, վերստին հրի ու սրի մատնել այնքան դժվարություններով վերջապես

ազատագրված երկիրը Նաիրի... Հասկանո՞ւմ եք՝ դուշը, ինչպես ասում էր Հաշի Օնիկ էֆենդին՝ երկնային թռչունը եկել, իր ոտքով մեր ձեռն էր ընկել, իսկ այդ ստոր պարոնները պահանջում էին, որ մենք մեր ձեռքով վերցնենք ու բաց թողնենք այդ դուշը- հանուն ինչի՞ կամ, ինչպես նույն Հաշի Օնիկ էֆենդի Մանուկոֆն էր ասում- անունն ի՞նչ դնենք... Օ, ոչ մի անուն չէր կարելի դնել այդ նաիրուրաց տխմարությանը, քան այն անունը, որ դրել էր Տեղական Կոմիտեն, ոչ՝ «Ընկերությունն» ինքը. եւ այդ անունն էր, ինչպես քանիցս կրկնել ենք արդեն ի միջի այլոց- «Ազգային դավաճանություն»: Եվ ովքե՞ր էին դրանք, եւ ո՞վ էր դրանց ղեկավարը.- մի քանի լղրճուկ սինլրքորներ, ինչպես ասում էր Համո Համբարձումովիչը, կամ հայվարա սանքյուլոտներ, ինչպես կարծում էր անգլիախոս Հաշի Օնիկ էֆենդին եւ չհասկացողին թարգմանում ու հասկացնում, որ սանքյուլոտներ նշանակում է- անվարտիք շներ, կարծես թե վարտիքավոր շներ էլ են լինում... Եվ ո՞վ էր, ո՞վ էր, ինչպես ասացինք, դրանց ղեկավարը, կամ, ինչպես էլի նույն Հաշին էր ասում- «վերի գլուխը».- արյունարբու մի սկյութ, ռասցած մի մոնղոլ, մի գերմանական լրտես, որ պլոմբած վագոնով հայրենիք վերադարձած՝ չին զորքերու եւ անվարտիք ավարաներու օգնությամբ ներսերում խլել էր արդեն իշխանությունն ու հանձնել այն գերմանացիներին՝ այդպիսով գլուխ բերելով իր խոստումը, որ տվել էր արյունարբու Վիլհելմ կայսեր... Ահա՛ թե ո՞վքեր էին դրանք եւ ահա թե ո՛վ էր դրանց «ամենավերի գլուխը», այսինքն՝ ամենամեծ ղեկավարը: Եվ, երեւակայո՞ւմ եք, ընթերցող- այդ ժամանակ արդեն պարզվել էր (գոնե այդպես էր ինձ հավատացնում պ. Աբոմարշը), որ նաիրյան այդ քաղաքում այդ սանքյուլոտների, այսինքն՝ անվարտիք շների ղեկավարն է եղել,- հավատո՞ւմ եք՝ սույն Հաշու խոսքերով ասած՝ այն «շանսատակ եղած» Կարո Դարայանը, որի սպանողներին զուր տեղն էր իր թանկագին ու անսպառ եռանդն անձնվիրաբար մսխելով՝ այնքան տենդագին որոնում ընկ. Վառոդյանը: «Շունը շան մահով կսատկի»,- ասում էր այդ առթիվ Հաշի Օնիկ էֆենդի Մանուկոֆը, եւ նա, թերեւս, իրավունք ուներ, որովհետեւ պե՞տք է վերջապես մի կերպ արտահայտություն գտներ այդ պատկառելի նաիրցու անձնուրաց նաիրասիրությունը: Ահա թե ո՛վ է եղել Կարո Դարայանը, ընթերցո՛ղ, իսկ մենք դեռ ցավում էինք նրա եղերական մահվան համար եւ անվերապահ հավատ էինք ընծայում նրա ամեն մի խոսքին: Իսկ նրա ընկերնե՞րը. ովքե՞ր էին նրանք նաիրյան այդ քաղաքում.- առաջինը՝ Կարո Դարայանի խորհրդավոր սպանությունից հետո քաղաքից անհայտ անհայտացած պ. Մարուքեն էր, ընկ.

Վառոդյանի հորջորջած այդ պ. Գրաստամատյանը, եւ ապա- մեզ քաջ ծանոթ «ծամը կըտրած» չակերտավոր «օրիորդ» օր. Սաթոն եւ Էլի մի քանի նման արարածներ, մի երկու հոգի, որ վակզալի մոտերքը հավաքված՝ գլխահան էին անում վակզալի բաշիբուզուկներին, այսինքն՝ երկաթուղային բանվորներին ու ծառայողներին եւ ֆրոնտից փախած դեզերտիրներին:- Ահա՛, ահա՛, ընթերցո՛ղ, թե ո՛վքեր էին նաիրյան այդ քաղաքի եւ նորաբողբոջ նաիրապետության հանգիստը խանգարողները. դրանք էին, այդ ստոր, նաիրուրաց, նաիրադավաճան մարդիկ, որ մրոտ կամ, տեր Հուսիկ քահանա-Խաչագողի խոսքով ասած, «խլնքոտ» քթներն ամեն տեղ խոթելով՝ ջուր էին պղտորում, որ ձուկ որսան: Եվ դա, հասկանո՞ւմ եք (կրկնում ենք, ընթերցող, որ լավ գլխի ընկնես եւ հարկ եղածի չափ լավ պատկերացնես դրության ամբողջ խայտառակությունը)- եւ այդ ամենն այն ժամանակ, երբ գրավված վայրերը, այսինքն արդեն իրողություն դարձած նաիրյան երկիրն անցնելով՝ արդեն անկախ Նաիրի էր հայտարարել նաիրյան հայտնի հերոս, այժմ հայտնի զորավարը,- այն ժամանակ, երբ, ինչպես ասում են՝ քափ ու քրտինք կտրած՝ նաիրյան ռազմիկներ էր ուղարկում գրավված վայրերը, այսինքն՝ երկիր Նաիրին պաշտպանելու համար, Տեղական Կոմիտեն, ոչ՝ տեղական, այսինքն նաիրյան իշխանությունը,- երբ, մյուս կողմից, արդեն ստույգ լուրեր ուներ ստացած նաիրյան իշխանությունը, որ, վերջին հորդաները հավաքած, թափթփուկ բանակներով մտադրություն ունի գրավված վայրերը խուժելու Հավիտենական Հիվանդը,- ա՛յդ ժամանակ ահա այդ ստոր, դավաճան, նաիրուրաց մարդիկ դեզերտիրություն էին քարոզում նաիրյան բանակում եւ խոսում էին հաշտության մասին. ո՞ւմ հետ.- Հավիտենական ոսոխի ու Հավիտենական Հիվանդի, որին նաիրցի մի ռազմիկի քացին անգամ բավական էր,- ինչպես ասում էր Մազութի Համոն,- որպեսզի նա հավիտենապես փչեր իր շունչը, եւ նա, իհարկե, կփչեր իր շունչը, եթե չլինեին այդ նաիրուրաց, ստոր, նաիրադավաճան մարդիկ...- Ո՛ւշ, շատ ուշ գլխի ընկան (եւ դեռ հարց է՝ գլխի կընկնեի՞ն արդյոք մյուսները, եթե չլիներ էլի նույն Մազութի Համոն) եւ ուշ, շա՜տ ուշ հարկ եղած խստագույն միջոցներին դիմեցին հիշյալ լրբերի վերաբերմամբ նաիրյան իշխանավորները,- բայց թե ի՞նչ կարող էին անել այլեւս նրանք, երբ արդեն մեր նկարագրած քաղաքի համարյա պարիսպների տակ էր ոսոխը, երբ, երկու օր անց, ինչպես հետագայում մանրամասն կիմանանք, դեպքերի թավալգլոր արագությամբ ընկավ նաիրյան այդ քաղաքը, եւ Հավիտենական ոսոխը ոտք դրեց վառվող քաղաքի մոխիրների վրա...

Մենք արդեն անցնում ենք նաիրյան այդ քաղաքի եւ սույն այս պոեմանման վեպի վերջին դեպքերի նկարագրությանը- եւ մի սուր, դառնաթախիծ կսկիծ սկսում է ուտել մեր սիրտը. ձեռքս կրկին սկսում է դողալ, եւ գրությանս տառերը գրվում են ծուռ ու դողդոջ, կարծես օրորում է տողերս աներեւույթ մի հողմ... Սեւ, մրուրոտ, արյունալի են այդ դեպքերը, որոնց նկարագրությանն անցնելու ենք հիմա, ընթերցո՛ղ, եւ չգիտենք՝ կարողանալո՞ւ է արդյոք մեր տկար գրիչը պատկերել այդ դեպքերն այնքան սրտակեղեք ու ահավոր, որքան սրտակեղեք ու ահավոր էին նրանք իրականում: Մենք ավելի քան կասկածում ենք դրան, ընթերցո՛ղ, որովհետեւ դժվար թե մեր հնամյա արեւի ներքո գտնվի մի գրիչ, որ պատկերել կարողանա այդ վերջին դեպքերը, պատկերել այնպես, որ բիզ-բիզ կանգնեն ընթերցողի մազերը, կսկծից ու ցավից խորովվի ընթերցողի սիրտը, եւ այրող, այրող, այրող արցունքներ թափվեն ընթերցողի աչքերից: Մենք չենք հավատում, որ դա կհաջողի մեզ, ընթերցո՛ղ, եւ բարկությունից ու ցավից ուզում ենք դեն նետել մեր գրիչը, չվերջացնել պոեմանման այս վեպը, որ առանց այդ էլ բավականին երկարեց,- բայց ահա իմ՝ հեղինակիս, ուղեղի խորհրդավոր գաղտնարանից ելնելով՝ խուժում են հոգեւոր հայացքիս առջեւ սեւ, մրուրե, արյունալի դեպքեր ու դեմքեր, եւ ես կրկին վերցնում եմ գրիչս՝ ընդհատված պատմությունս շարունակելու: